



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

30 հունիս 2022

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արշավիր Բայաթյանը, Դավիթ Հարությունյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Կարեն Մանասերյանը, Դավիթ Մովսիսյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Գրիգոր Սարգսյանը, Էմիլ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին՝

Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետներ՝ Քրիստինե Պողոսյանը (Ժ/պ), Լուսինե Մարտիրոսյանը (Ժ/պ), առաջատար մասնագետներ՝ Անի Գրիգորյանը (Ժ/պ), Նաիրա Ստեփանյանը (Ժ/պ), քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արմեն Աղաջանյանը (Ժ/պ), նույն բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Այվազյանը (Ժ/պ) և առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը (Ժ/պ):

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը

Լսեցին.

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ **ավագանին**
ո ր ո շ ե ց .

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 30-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 30-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման լրացուցիչ ֆինանսավորում ծրագրին մասնակցելու համար նախաձեռնող խմբի կազմը հաստատելու և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին դիմելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

5) Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին:

6) Ծառեր հատելու համար թույլտվություն տալու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 80-Ա որոշմամբ հաստատված հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

8) Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0
---------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/

